Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 879. Փոխառության պայմանագրի տոկոսները

1. Փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը, իսկ օրենսդրությամբ սահմանված տարեկան փաստացի տոկոսադրույքը չի կարող գերազանցել փոխառության պայմանագրում նշված տոկոսադրույքի և 2,5 տոկոսի հանրագումարը (որը ներառում է սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը և այլ վճարներ):

2. Տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

3. Փոխառության պայմանագիրը ենթադրվում է անտոկոս՝ դրանում ուղղակիորեն այլ բան նախատեսված չլինելու դեպքում, եթե՝

1) քաղաքացիների միջև փոխառության պայմանագիրը կնքված է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումարով և այն կապված չէ կողմերից որևէ մեկի ձեռնարկատիրական գործունեության հետ.

2) փոխառուին պայմանագրով հանձնվել է ոչ թե դրամ, այլ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույք:

(879-րդ հոդվածը խմբ. 20.03.06 ՀՕ-41-Ն)